


Ա. ՅԵ. ՍՈԼՏԻԿՈՎ - ԾԳԵԴՐԻՆ

ՄԻՇԱԿԱՅՑՎԱԿԱՒԱՆ



ՊԵՏՐԱՏ 1938 ՅԵՐԵՎԱՆ

ՏԵՍ. Տ. Տ. Տ.

30 MAY 2011

891.7115

Մ. ՅԵ. ՍԱԼՏԻԿՈՎ - ՀԶԵԴՐԻՆ

0-13

Կ

ՄԻՇԱՆ ՅԵՎ ՎԱՆՑԱՆ

(Պատմվածք նորտասիրական կարգերի ժամանակաշրջանից)

ՏԸՀ

25.07.2013

5024

Նախասենյակում նստած են յերկու տղա՝ Վանյան ու Միշան և հյուր զնացած տիրուհուն են սպասում։ Կես գիշեր ե արգեն, իսկ տիրուհին չկա ու չկա, ճարպեա մոմի կտորը հալվել ու այրուքակալվել ե, նրա աղոտ և առակայծող լույսը լուսավորում է միայն յերկու զբուցակիցների գեմքերը և սեղանը, վորի առջենստած են նրանք. Վերևում և անկյուններում մութն ե, Տան մեջ լուսթյուն և տիրում ինչպես դադաղում. վաղուց են արգեն ընթրել աղախինները, վերադարձել են խոհանոցից և պատահած տեղը պառկել ու քնել են, պատվիրելով յերեխաներին՝ տիրուհին վերադառնալուն պես դարթեցնել իրենց։ Ժամանակ առ ժամանակ պատուհաններից ինչ վոր սպիտակ բան եր յերեւում, յերեւում եր ու անհայտանում, յերեւում եր ու անհայտանում, զրուում ձյուն եր գալիս, իսկ յերեխաները կարծում ելին, վոր այդ մեռելի գլուխ և նայում և սարսում ելին։

Վանյան մի ամբակաղմ, արագաշարժ, ուսահեր և սեաչյա տղա յե՞ նա հավատացնում է Միշային, վոր վոչնչից չի վախենում, վոր նա մի անգամ մի իսկական մեռել և տեսել և ամենին ել չի վախեցել։

—Յես վոչնչից չեմ վախենում, —ասում ե նա, սակայն ակամա գունատվելով, յերբ հանկարծ սառնամանիքը անսպասելիորեն զարկում եր աղայի տան պատերին, —ինձ համար մենակ լինելը տիսուը ե, բայց քեզ հետ, վոչինչ...

—Իսկ վոր հանկարծ այրվենք, հը՝ —յերկչուտությամբ հարցնում ե Միշան։

—Մենք այրվել չենք կարող, —այնպիսի համոզեցուցիչ ձայնով և պատասխանում Վանյան, վոր Միշան անմիջապես հանգստանում է։



2752
38

Միշան, ի հակադրություն վաճայացի, թուլակազմ, ջղային, սպիտակավուն մի տղայ յե, զանգրահեր զլիխ կով և խոշոր կապույտ աչերով. Նա շտառշուտ առաստղին և նայում ե, տեսնելով այնտեղ անթափանց խավարը, ցնցվում ու կուչ ե զալիս:

Այն բուգելին, յերբ մենք ծանոթանում ենք նրանց հետ, նրանք աշխատյժ, սակայն մի քիչ տարորինակ խոսակցությամբ են վրապված:

—Սառը դանակով, յերեխ, կցավի, չե, —շեշտակի նայելով վաճայացի աչքերին, հարցնում ե Միշան:

—Եղ միայն մեկ անգամ կցավի, իսկ հետո՝ վաշինչ, —պատասխանում ե վաճայան և հայրաբար Միշայի գլուխն ե շոյում:

—Իսկ միտող ե, թե ինչպես եր մորթում իրեն Միշելը. Սկզբում նա ել եր միշտ պարձենում կմորթեմ ինձ ու կմորթեմ, —իսկ հենց վոր դանակը բիին քսեց ու արյունը հստեց...

—Ե՞ս, զու ել խոհարար Միխեյին ես որինակ րերում: Միխեյկան համար դուքս յեկավ: Հետո նա հավանորեն, լավացավ, իսկ ինչո՞ւ. համար լավացավ: Միխեյին ե, պատժեցին հիմարին, իսկ մենք ենպես կքոնք դանակը, վոր այլս չբուժվենք:

—Իսկ զանակները պատրաստել ես, վաճայա:

—Ինչպես չե, պատրաստել եմ: Դեռ առավոտվանից եմ սրել Միշայն տես, հա, ել միտքդ չփոխես:

Միշան կամացուկ հառաչեց, նրա հայացքը կանգ առավ այրվող մոմի վրա:

—Հ՞ը, չկտրեմ մոմի այրուքը... վերջին անգամ, —թեթևակի հուղված ձայնով ասաց Միշան:

—Իսկ ինչ կասես, վաճայա, յեթե մեզ ջուրը գըշենք, —հանկարծ հարցրեց Միշան:

—Ի՞նչ տարորինակն ես, Միշուտկա: Նախ գու ինձ պատմիր՝ ջուրն այժմ ինչ վիճակումն ե: Ասա, խնդրեմ, այժմ ամֆո ե, թե...

—Հա, այժմ ջուրը սառն ե... թերես, զրի մեջ վոր շրմիաս, չես ել զիմանա:

—Ա՞յ, հենց եղ ե, վոր կա: Խեղդվելու համար հարկավոր և սաոցախոսոչը մտնել, ով ե իմանում, կսկսես թրպրուալ ու զուրս կզառ. հասկացիր, թե ինչքան տահնջանքներ կլրեա: Իսկ զանակով հեշտ ե: Դանակով վոր մեկ անգամ քսեցիր—վերջ: Ի հարկե պետք ե ուժեղ:

—Յեվ ել վոչվոք չի ծեծի, —շնչաց Միշան:

—Ել չի ծեծի: Հողիդ հրեշտակները կառնեն և կտանեն կղնեն աստծու սեղանի առաջ:

—Իսկ աստված—վոչինչ:

—Իսկ աստված կհարցնի՝ ով աստծու ստրուկներ, ինչո՞ւ չսպասեցիք ձեր վախճանին: Կասի՝ ինչո՞ւ դուք պնծամանակ մահվան տանջանքը ընդունեցիք: Իսկ մենք նրան ամեն ինչ կպատմենք: Մենք բոլորը կասենք, թե ինչպես եր տանջում մեզ տիրուհին՝ Կատերինա Աֆանասևնան, թե ինչպես մեզ համար ապրելը գառնացել եր, թե ամեն որ ինչպես եյին մեզ ծեծում... ծեծում, տանջում եյին միշտ:

Միշան հառեց աչքերը. սրտի վրա կուտակված արցունքները դուրս ցայտեցին աչքերից տաք աղբյուրի նմանա թեվ հոսում եյին այդ արցունքները, հոսում եյին աղատորին, առանց ջանքի, առանց ծամածության, հոսում եյին, ինչպես մայր հողի լեցուն կրծքից ժայթքող հորդառատ աղբյուրը: Վաճայան սկսեց միսիւթարել լացողին:

—Վաղը մենք նրան՝ Կատերինա Աֆանասևնային,

մի լավ կխաբենք,—ասաց Վանյան, —վաղը նրա մոտ
սեղանի շուրջը հյուրեր կհավաքվեն, իսկ սպասավորող
չի լինի:

Միշան ի պատասխան հառաչեց միայն:

—Յես, ախք, բալոր գանակներն ել թաղցրել եմ,
—շարունակեց Վանյան, —դանակ չեն ունենա, թե մի
բան կարեն:

Դահլիճում զսոաց ժամացույցը: Լսելով ժամա-
ցույցի ֆշացող հնչյունները, Միշան ցնցվեց, վերջին
անգամ խորը հառաչեց և գաղաքեց լաց լինելոց:

—Ծուտով տիրուհին կգա, —յերկշոտությամբ ա-
սաց նա, հաշվելով տասերկու ժամը:

—Վճաց չե, սպասիր, շուտամի, —պատասխանում
ե Վանյան: —Ե՞ն, ինչ լավ կլինեք քնեյինք այժմ:

—Չե, Վանյա, մի քնիր:

—Չլինի՛ վախենում ես:


—Հա, վախենում եմ, —խոստովանեց Միշան և
ամբողջովին կծկվեց:

Յեկատերինա Աֆանասենան վերին աստիճանի
անբարոյականացած կին եր: Ամբողջ քաղաքը զիտեր,
թե նա ինչ փորձանքներ եր բերում Մաշկաների և
Ոլգուշկաների զլիկն:

—Այսոր ճաշի ժամանակ Յեկատերինա Աֆա-
նասենայի սուպի մեջ սկսուախճ են գտել, —խոսում
եյին քաղաքում նրա մասին: —Յեվ ինչ եյիք կարծում:
Միանգամայն հանգիստ կերպով նա կանչում և խոհա-
բարին և հրամայում ե նրան ուտել սկսուախճը:

—Չար կնիկ ե:

—Իսկը փորձանք:



Վաղը մենք նրան՝ կատերինա Աֆանասենային, մի
լավ կխաբենք, ասաց Վանյան, —վաղը նրա մոտ սեղանի
շուրջը հյուրեր կհավաքվեն իսկ սպասավորող չի լինի:

— Սենկա, արի վառարանը լիզիր, — ասում եր նա
Սենկային: Սենկան լիզում եր վառարանը և լեզուն
այրում: Նա կարմբում եր, նրա զեմքը մի տեսակ
անբնական ուռչում եր, աչքերից արցունքներ եյին
քամլաւմ:

— Ի՞ն, հիմար, զռախ եր պահատ, — ասում եր տի-
րուհին: Յեվ ապա հետեւմ եր ուրախ հրհոցը:

— Ի՞ն զիտես ինչ, Միշուտկա, — հանկարծ հարց-
րեց Վանդան:

— Ի՞նչ ես ուզում:

— Գնանք, մի սենյակները շրջենք... տեսնենք...
Վայրկենաբար Միշայի մտքով անցավ՝ վերջին ան-
գամ:

— Գնանք, Վանդա, — ասաց նա:

Կանյան պոկեց մոմի այրութը և առաջ զնաց.

— Ա՛յ, Միշա, ես սենյակը գահիձն ե, — ասաց նա,
յերբ առաջին սենյակը մուտք:

— Դահլիճ, — ասաց Միշան նրա հետեխց:

— Հիմա, Միշա, յերկրպագիր չորս կողմդ, — իրա-
տում եր Վանյան Միշան յերկրպագեց բոլոր չորս
կողմերը, երա հետ միասին նույնը կատարեց և Վանյան:

Մյուպիսով նրանք բոլոր սենյակները շրջեցին և
ամեն տեղ հրաժեշտ եյին տալիս. վերջապես հասան
վերջին սենյակը, վարտեղ յերկանդանի լայն մահճակալ
եր դրված:

— Մի տես, ե, — ասաց Վանյան և վոչ միայն չեր-
կըրպագեց բոլոր չորս կողմերը, այլ թքեց: — Դիտես
ինչ, — շարունակեց նա, — արի հրավառություն սար-
քենք: Յերեկի մեր ջաղուն զեր շուտ չի գա:



— Սըիկա: — Ուժեղ հարվածք գետին գորեց Վանյային:

— Մարքենք, — համաձայնվեց Միշան, և նրա յերեսի վրա չողաց մանկական ուրախ ժպիտը:

Վառեցին բոլոր մոմերը, և խոկապես հրաշալի հրավառություն ստացվեց: Միշան կամեցավ աղադառնալ: Վանյան ել համաձայնություն տվեց հյուր լինել: Մակայն հազիվ եյին բազկաթոռին բազմել աղան ու հյուրը, հազիվ հարցրեց աղան իր հյուրի քեֆ հալը, յերբ նախասենյակից սաստիկ զանգահարություն լսվեց: Աղան և հյուրը շտապեցին մոմերը հանգցնել, բայց խուճապելով գործը զլուխ չեր գալիս՝ նորից ավելի ուժեղ և ավելի անհամբեր զանգահարություն լսվեց:

Վերջապես մի կերպ հանգցրին մոմերը և նախասենյակ վաղեցին: Վանյան գեռ գուն հետեւից լսում եր, թե ինչպես եր տիրուհին բարկանում.

— Այդ բոլորը սրիկա լակոտներ են, — ասում եր նա սաստիկ զայրացած: — Սպասեք, յիս ձեզ ցույց կտամ:

— Հանգստացիր, ջանիկս, — համոզում եր նրան իվան վասիլեիչը: — Գուցե, յեղբայրդ՝ Նիկանոր Աֆանասևիչն և յեկել:

Այդ ժամանակ Վանյան բացեց զրոխ գուռը:

— Յեղբայրս, Նիկանոր Աֆանասևիչը այստեղ ե, — յեղավ տիրուհու առաջին հարցը:


— Վոչ, այստեղ չեմ

— Հապա դահլիճում ով եր վառել մոմերը:

— Վոչ զոք չեր վառել:

— Սրիկա:

Ուժեղ հարվածը գետին զլորեց Վանյային: — Դահլիճում մոմերը ով վառեց, — զիմեց տիրուհին Միշային, զորը կանգնած եր ահարեկված: — Վոչ, չենք վառել — հազիվհազ շշնջաց Միշան:



Նրանք դուրս յեկան բակը և ցանկապատի վրայով մագլւցեցին:


— Յերկաթ եք մեզ տանջելու, — մի տեսակ անդնական ձայնով գոռաց Վանյան, վեր թոչելով հատակից, մի ակնթարթում յեղունզները խրեց Կատերինա Աֆանասիևայի բերանն ու քիթը:

Կատերինա Աֆանասինան ուշագնաց յեզավ: Վանյային մեծ դժվարությամբ հեռացրին նրանից, վորովհնետե Վանյան կարծես թե անզպայցել և ամրովչովին քարացել եր: Կատերինա Աֆանասինային թևանցուկ ննջարան տարան, իսկ Իվան Վասիլեիչը ասում եր.

— Ամոթ չե՞մ, այ կի՞ն, վոր գու զյագաների պատճառով անհանգստացնում ես քեզ:

Վանյային ել խոհանոց տարան՝ լաց չեր լինում նա, այլ միայն զոռում եր՝ ըստ յերեսույթին, նրա ամբողջ եյությունը խորապես և բոլորովին ցնցված եր, նա չեր տիրապետում իրեն, և այդ սուբ, անրնական ծիչը եր կտմքին հակառակ դուրս եր թոչում նրա կրծքից: Ամբողջ սպասակազմը սաստիկ շփոթվել ու հափաքվել եր Վանյայի շուրջը՝ սկսեցին նրան շփել և հազիվ հանգստացրին: Յերբ ծիչերը մեղմացան, Վանյան վայրկենաբար և ամուր քննեց:

Արդյոք նրա համար, վոր Կատերինա Աֆանասինան իսկապես հիվանդացավ, թէ այն պատճառով, վոր կալվածատիրոջ սպասավորները զեկուցել են Վանյայի կատաղության մասին, սակայն այդ գիշեր տղաների մասին վոչ մի կարգաղբություն չեր արված: Միայն ասված եր յերկուսին ել պահել խոհանոցում: Միշան պառկեց Վանյայի կողքին, բայց յերկար ժամանակ չկարողացավ աչքերը փակել՝ վաղվա որը նրա հուզված յերեակայությանը պատկերանում եր իր բոլոր մանրամասնություններով, իր բոլոր զարհուրելի խոշտանգումներով: Նրա աչքերին յերեռում եր ծիպոտների



Վանյան անշնչացած եր, իսկ Միշան զեռ կենդանի յեր:

կույտը, նրա աչքերին յերեսում եր Կատերինա Աֆա-
նասինան՝ կարծես թե նրա յերեսը բոցավառի և,
կարծես թե զլիսի վրա բերանները բացած ոձեր են
փոլորդում, և այնտեղից հրեղին խայթոցներ եյին
դուրս ցցվում: Վանյան ժամանակ առ ժամանակ աըն-
քում եր, սպասավորները քնել եյին նրա շուրջը ան-
դորր կերպով, Միշան սարսափեց...

«Ա՞յս, հարկավոր չե, ախ, մի մորթեք», լսվում
եր նրա ականջներում, մինչև վոր, վերջապես, մոտ
ժամի յերեքին նա քնեց:

Ժամի չորսին նրան զարթեցրեց Վանյան: Միշան
յերկար նայում եր նրան իր զարմացած, նիրհող աչքե-
րով, յերկար ժամանակ նա չեր կարողանում հասկա-
նալ, թե վրատեղ և ինքը և ինչ և կատարվում իր հետ:
—Ժամանակն ե, —շնչում եր Վանյան:

Միշան ցնցվեց, բայց գեռ վոչինչ չեր հասկանում:
—Վեր կաց, —պնդում եր Վանյան:

Մեքենայաբար վոտքի կանգնեց Միշան և մեքե-
նայաբար ել հապնվեց: Նրանք դուրս զնացին հաշտը՝
ամեն կողմից նրանց պաշարեց ցուրտ ողը և մի քիչ
սթափեցրեց Միշային: Միշայի մեջ հանկարծ մի ինչ
վոր կյանքի բռւռն ծարավ բռնկվեց: Նա յերկու փոքրիկ
ձեռներով բռնեց իր կոկորդը, սկսեց գեռ ու դեն ընկնել
ու լալ:

—Լալիմն, հեռացիր, գնա քնիր, —արտասանեց
Վանյան:

—Վոչ, վոչ, —կմկմում եր Միշան, —վոչ, վոչ...
կգամ: Յես իսկապես, կգամ:

—Ել ինչ ես լալիս: Միթե յերեկ չտեսար:

Նրանք դուրս յեկան բակը և ցանկապատի վրայով
մագլցեցին: Փողոցը ամայի յեր, և ամբողջ քաղաքում
անզարինելի լուս թյուն եր թագավորում: Փաղաքական

վոռնոցով դեպի նրանց վագեց բակապահ շունչ՝ Տրե-
գորկան, բայց Վանյան իր բուռնցքը ցույց տվեց նրան,
վորի շնորհիվ նա մի յերկու անգամ պոչը շարժեց ու
վագելով մտավ իր բուռնը:

Նրանց առջեն և ահա ձորակը: Նրանք պայմա-
նավորվել են այդ ձորակում կատարել իրենց մտագը-
րությունը. Վանյան հույս ուներ, վոր այդտեղ վոչ
վոր չի խանգարի նրանց, վոչ վոր ովհսության դաւ
չի կարող:

Վանյան ցած իջավ և առաջ գնաց, նա կայտառ եր,
իսկ մինչդեռ նրա մեջն ել եյին խոսում կյանքի
հրապուրիչ քաղցր ձայները, նա ծիծաղում եր, իսկ
այնինչ նրա կրծքում մի ինչ վոր սաստիկ փափակ
եր յեռում. նո զնում և իրար վրա զարդարեն եր
որում. բայց զբանից առաջացած հնչյունը մի տեսակ
արտում, կցկոտուր հնչյուն եր. նա զգում եր, վոր իր
ներսում ամեն ինչ վասկում ե, իսկ այնինչ զունատ
ու նիհար մարմինը խոնավությունից և ցրտից սաս-
տիկ զուզում եր... Նրա հետեւ զնում եր Միշան և
առաջիկ նման մի տեսակ մոռացության մեջն եր...

Լուսաղեմին անցորդ դյուզացիները ձայն տիկն
իր պահակատեղում հանգիստ քնած վոստիկանական
պահակին: Զորակում նրանք աղեկուուր ձայներ եյին
լսել և այդ մասին յերկյուզածությամբ եյին դեկուցու-
հասարակության անզորը պահպանող քնկոս պա-
հակին:

—Եմի, ոզնեցք: —Հուսահատ սուր ճիշերն այդ
իսկ բոպեյին հնէեցին ողի մեջ: Իջան ձորակը և այնտեղ
զան աղանդերին՝ Վանյան անշնչացած եր, իսկ Միշան
դեռ կինդանի յեր: Անվատահ և զողղոցուն ձեռքը մի
քանի անդամ զանակը քսել եր կոկորդին, սակայն
վախվելով և անվճականությամբ:

1015-04

959
Թարգմ. Գ. Ազնավուրյան
Խմբադիլ Հա. Պողոսյան
Տեխ. Խմբադիլ Ան. Քասպարյան
Սրբադրիչ Հ. Մանսուկյան

-219:



Գլավիտի լիազոր՝ Դ.—358 Հրատ 4536.
Պատվիր 217. Տիրամ 3000.

ՀՀ Ազգային գրադարան



NL0387696

289

5024



М. САФИРОВЫХ
Миша и Вова
Лит. Акт. ССР. Баку. 1968

891.715
0-13